ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 37/4

27-ը ապրիլի 2019 թվականի

ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման բաժնի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման բաժնի կանոնադրությունը/նոր խմբագրությամբ/՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2012թ.-ի նոյեմբերի 10-ի թիվ 5 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման բաժնի կանոնադրությունը:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝_____ Ա.Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2019թ. ապրիլի 27-ի թիվ 37 նիստում

Գիտական խորհրդի նախագահ _____Ա.Վ. Ցուցուլյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությունը սահմանում է «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) հեռակա ուսուցման բաժնի (այսուհետ ՀՈՒԲ կամ բաժին) գործունեության իրավական հիմքերը:

2. Սույն կանոնադրությունը հաստատվում և նրանում փոփոխություններն իրականացվում են ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի որոշմամբ:

3. Սույն կանոնադրության և ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության դրույթների միջև հակասություն առաջանալու դեպքում գործում են ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության դրույթները:

4. ՀՈՒԲ-Ը ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանում է, որը սույն կանոնադրությանը համապատասխան իրականացնում է հեռակա ձևով ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման, համակարգման և վերահսկման, ինչպես նաև նյութական և մեթոդաբանական աջակցության ապահովման գործառույթները:

5. ՀՈՒԲ-ը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության համաձայն:

6. ՀՈՒԲ-ն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ-ի կառավարման մարմինների ընդունած իրավական ակտերով:

7. ՀՈՒԲ-ն ունի կնիք, իր անվանմամբ դրոշմակնիք, պաշտոնաթուղթ /բլանկ/, խորհրդանիշ, անհատականացման այլ միջոցներ:

8. ՀՈՒԲ-ը ենթակա է ԵՊՀ ԻՄ-ի փոխտնօրենին, իսկ բաժնի հաստիքները որոշվում են ԵՊՀ ԻՄ-ի հաստիքացուցակով:

II. ՀՈՒԲ –Ի ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. ՀՈՒԲ-ի հիմնական խնդիրն է հեռակա ուսուցման գործընթացի կազմակերպումը, կրթության որակի բարձրացումը:

10. ՀՈՒԲ-ի գործունեության հիմնական ուղղություններն են՝ հեռակա ձևով ուսումնական գործընթացի կազմակերպումը, դասախոսական կազմի ուսումնական և մեթոդական աշխատանքների համակարգումը, հեռակա կրթության զարգացման առաջարկների և ծրագրերի ներկայացումը, բաժնի աշխատանքի արդյունքների ամփոփումը, առանձին դասախոսների ուսումնական և մեթոդական աշխատանքների առաջավոր փորձի տարածումը, բաժնի ղեկավարի միջոցով Մասնաճյուղում հեռակա ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման կառավարումը, համակարգումը և վերահսկողությունը, կրթական գործընթացի մեջ դասավանդման և ուսումնառության նոր ձևերի, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը, ուսանողների առաջընթացի վերլուծությունը և այլն:

11. ՀՈՒԲ-ի հիմնական գործառույթներն են.

1) հեռակա ուսուցման ուսումնական գործընթացի կազմակերպումը և վերահսկումը,
2) հեռակա ուսուցման ուսումնական գործընթացին մասնակցող ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումների հետ աշխատանքների կոորդինացումը,
3) հեռակա ուսուցման ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի կատարման վերահսկումը,
4) հեռակա ուսուցման դասատախտակների կազմումը և ուսումնական գործընթացի կազմակերպումը,

5) ժամավճարային հիմունքներով աշխատողների ձևակերպման և հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստման օժանդակումը,
6) հեռակա ուսուցման ընթացիկ և հանրագումարային քննությունների ժամանակացույցերի կազմումը և իրականացման ապահովումը,
7) հեռակա ուսուցման ուսումնական գործընթացի փաստաթղթային գործավարության ապահովումը,
8) հեռակա ուսուցման ուսանողների ուսումնական և մանկավարժական պրակտիկայի կազմակերպման օժանդակումը,
9) հեռակա ուսուցմամբ ուսանողների տվյալների հենքի ստեղծումը և պահպանումը,
10) հեռակա ուսուցմամբ ուսանողների շարժի հետ կապված հրամանների համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը,
11) հեռակա ուսուցմամբ ուսանողների ուսման վարձի ժամանակին մուծման վերահսկումը:

10. ԵՊՀ ԻՄ-ի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվով ՀՈՒԲ –ին կարող են հատկացվել ֆինանսական միջոցներ, որոնք բաժինը տնօրինում է սահմանված կարգով:

III. ՀՈՒԲ –Ի ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

11. ՀՈՒԲ-ի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է բաժնի վարիչը:

12. Բաժնի վարիչը.
1) իրականացնում է ՀՈՒԲ-ի ընթացիկ կառավարումը,
2) կրում է պատասխանատվություն ՀՈՒԲ–ի արդյունավետ գործունեության համար,
3) կազմակերպում է դասացուցակների կազմումը և վերահսկում է դրանց կատարումը,
4) կազմակերպում է ուսանողների հաճախումների և ընթացիկ առաջադիմության մշտադիտարկումների հաշվետվությունների կազմումը,
5) վերահսկում է քննությունների և ստուգարքների անցկացման գործընթացը,
6) ղեկավարում է ուսանողական խմբերի ավագների աշխատանքները,

7) իր լիազորությունների շրջանակում մասնաճյուղի տնօրենին խրախուսման, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության է ներկայցնում ՀՈՒԲ-ի աշխատակիցներին և հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողներին,
8) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

13. ՀՈՒԲ-ի վարիչն իրավունք ունի.
1) բաժնի աշխատանքները կարգավորող կարգադրություններ անել և հրահանգներ տալ,
2) մասնակցել Մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների այն աշխատանքներին, որտեղ քննարկվում և լուծվում են բաժնի գործունեությանն առնչվող հարցեր,
3) ընտրվել Մասնաճյուղի գիտական խորհրդի կազմում,
4) Մասնաճյուղի տնօրենին և գիտական խորհրդին ներկայացնել հեռակա ուսուցման կազմակերպմանն առնչվող կրթական, մեթոդաբանական և այլ գործունեության բարելավման առաջարկներ,
5) ըստ Մասնաճյուղում գործող կարգի՝ մասնակցել դասալսումների, քննությունների և ստուգարքների,
6) առաջարկություններ ներկայացնել ուսանողներին՝ քննաշրջանին և ավարտական աշխատանքների պաշտպանության թույլատրելու վերաբերյալ,
7) ուսումնամեթոդական վարչության համաձայնությամբ սահմանել ուսանողների կողմից քննությունների և թեստերի հանձնման ժամկետներ, եթե առկա են հիմնավոր պատճառներ,
8) ակադեմիական հաջողությունների և Մասնաճյուղի հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ուսանողների համար Մասնաճյուղի տնօրենությանը առաջարկներ ներկայացնել բարոյական և (կամ) նյութական խրախուսման տարբեր ձևերի, այդ թվում՝ ուսման վարձի զեղչման վերաբերյալ,
9) Մասնաճյուղի տնօրենությանը առաջարկներ ներկայացնել ներքին կարգապահական կանոնները խախտած կամ ակադեմիական ցածր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին պատանասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

14. ՀՈՒԲ-Ի մյուս աշխատակիցների գործառույթները սահմանվում են համապատասխան պաշտոնների անձնագրերով: